**TOR for Short Term Expert Services**

1. **Summary of the ToR**

| | |
|---|---|
| **Project** | Stronger Civil Society for Stronger Child Protection |
| **Project Duration** | 01.12.2024 – 30.11.2027 |
| **Purpose** | Develop and implement detailed advocacy and communication plan / strategies to ensure that the advocacy efforts of the project led by CPNs include mobilization of the CPN member CSOs for stronger engagement in finalization of the 2025-2029 Comprehensive Program and its implementation. |
| **Service start and end date** | 18.06.2026 – 20.12.2026 |
| **Final Reports with Annexes** | 25.12.2026 |

2. **Introduction**

The current social, economic and institutional developments in Armenia continue to pose significant challenges to the child protection (CP) system. While important reforms have been initiated in recent years, gaps remain in the regulatory framework, service standards, and quality assurance mechanisms within the child protection system. Strengthening coordinated, evidence-based advocacy by civil society actors is critical to addressing these gaps and ensuring sustainable systemic improvements.

The "Stronger Civil Society for Stronger Child Protection" project (hereafter referred to as the Project) aims to enhance the capacity of civil society actors to contribute effectively to policy formulation and advocacy processes in the field of child protection in Armenia. The Project is implemented jointly by World Vision Armenia Child Protection Foundation (WVA), Child Protection Network (CPN) Non-Government Organization (NGO), Armavir Development Center (ADC) Non-Government Organization (NGO), Armenian Association of Social Workers (AASW) Non-Government Organization (NGO), and Tahuys Social-Educational Non-Government Organization (NGO).

Within the framework of Specific Objective 1 (SO1): "CP actors are capacitated to actively engage in policy formulation and evidence-based advocacy aimed at improved CP regulatory framework in Armenia," the Child Protection Network (CPN) will facilitate a structured process for the development of joint policy recommendations and position papers in priority thematic areas, including but not limited to child protection minimum standards, quality of services, and other systemic challenges identified by member organizations.

To ensure a structured, participatory, and evidence-informed process, CPN will organize a working session with member CSOs, followed by the development of concrete policy documents to guide CPN's advocacy efforts in 2026.

For this purpose, CPN seeks to engage a Consultant to support the analytical framing, drafting, and finalization of the policy recommendations and/or position papers emerging from this process.

## 3. Objective of the assignment (Scope of Work)

The consultant will develop a detailed Advocacy and Communication Plan/Strategy to strengthen the advocacy efforts of the project led by the Child Protection Network (CPN), ensuring active mobilization and stronger engagement of CPN member CSOs in the finalization and implementation of the 2025–2029 Comprehensive Program.
The assignment will include:

- Develop a draft Advocacy and Communication Plan/Strategy by the end of June **2026**, outlining advocacy objectives, key messages, stakeholder mapping, communication channels, engagement mechanisms, and approaches for mobilizing CPN member organizations.
- Conduct and facilitate **three round table discussions** with CPN members and relevant stakeholders to gather input and strengthen collective engagement:
  - Round Table 1 – **June 2026**
  - Round Table 2 – **September 2026**
  - Round Table 3 – **November 2026**
- Maintain regular coordination and communication with CPN staff throughout the assignment to ensure alignment with project developments, emerging advocacy priorities, and stakeholder feedback.
- Revise and refine the draft Advocacy and Communication Plan based on discussions, feedback, and outcomes from the round tables and ongoing consultations.
- Submit the **final Advocacy and Communication Plan/Strategy by December 2026**, incorporating recommendations and agreed actions to support CPN advocacy efforts related to the 2025–2029 Comprehensive Program.

**Duration and Timeline**

**Application submission deadline:** June 12, 2026.

**Preparation phase:** Prior to June 23, 2026

**Conducting round table meetings:** June, Sept, Nov

**Final submission:** Within 5 working days after the last round table meeting

**Total estimated level of effort:** 8 working days.

## 4. Key Tasks and activities

### 1. Inception and Desk Review

- Review relevant project documentation, including the 2025–2029 Comprehensive Program, project proposal, existing advocacy and communication materials, and relevant policy documents.
- Hold an inception meeting with CPN staff to clarify expectations, priorities, timelines, and key stakeholders.
- Identify key advocacy opportunities, challenges, and engagement needs related to the Comprehensive Program.

**2. Stakeholder Mapping and Analysis**

- Conduct stakeholder mapping to identify key government institutions, civil society actors, development partners, media representatives, private sector actors, and other relevant stakeholders.
- Analyze stakeholder interests, influence, engagement potential, and communication needs.
- Identify opportunities for strengthening the participation and mobilization of CPN member organizations.

**3. Development of Draft Advocacy and Communication Plan/Strategy**

- Define advocacy objectives, expected outcomes, and priority advocacy themes.
- Develop key advocacy and communication messages tailored to different target audiences.
- Propose communication channels, tools, and outreach approaches.
- Design engagement and mobilization mechanisms for CPN member organizations.
- Prepare an implementation framework, including indicative activities, responsibilities, and monitoring considerations.
- Submit the draft Advocacy and Communication Plan/Strategy by June 2026.
- Propose key message samples for the communication purposes.

**4. Facilitation of Round Table Discussions**

- Prepare agendas, discussion guides, and facilitation materials for three round table discussions.
- Facilitate:
    - Round Table 1 (June 2026) to validate initial findings and gather input on the draft strategy.
    - Round Table 2 (September 2026) to discuss progress, emerging advocacy priorities, and stakeholder engagement approaches.
    - Round Table 3 (November 2026) to review final recommendations and agree on priority actions.
- Document key findings, recommendations, and agreed actions from each round table.

**5. Ongoing Consultation and Coordination**

- Maintain regular communication with CPN staff throughout the assignment.
- Incorporate feedback from CPN members, stakeholders, and project partners.
- Adjust and refine advocacy priorities, messages, and engagement approaches as needed.

**6. Finalization of the Advocacy and Communication Plan/Strategy**

- Revise the draft plan based on round table discussions, consultations, and stakeholder feedback.
- Develop a final Advocacy and Communication Plan/Strategy that includes:
    - Advocacy objectives and priorities;
    - Stakeholder mapping and engagement framework;
    - Key messages and communication approaches;
    - Communication channels and outreach tools;
    - Member mobilization and participation mechanisms;
    - Recommended advocacy actions and implementation roadmap.

- Submit the final Advocacy and Communication Plan/Strategy within five working days after the final round table meeting.

**Expected Deliverables**

1. Stakeholder Mapping and Analysis (integrated into the strategy development process).
2. Draft Advocacy and Communication Plan/Strategy (June 2026).
3. Facilitation of three round table discussions and brief summary notes of outcomes.
4. Final Advocacy and Communication Plan/Strategy (December 2026).

## 5. Expected deliverables, schedule and reporting

The assignment requires the services of a Local expert, with the level of efforts of up to 8 workdays.

| | **Tasks** | **Deliverables** | **Expert Days** | **Timeline** |
|---|---|---|---|---|
| 1 | Stakeholder Mapping and Analysis | Stakeholder mapping report identifying key actors, their roles, influence, interests, and engagement opportunities related to the 2025–2029 Comprehensive Program | 1 day | June |
| 2 | Draft Advocacy and Communication Plan/Strategy | Draft Advocacy and Communication Plan/Strategy, including advocacy objectives, key messages, stakeholder engagement framework, communication channels, and member mobilization approaches | 2 days | June |
| 3 | Facilitation of three round table discussions | Three facilitated round table discussions; agendas, facilitation materials, participant engagement, and brief summary reports with key findings and recommendations from each meeting | 3 day | June<br>Sept<br>Nov |
| 4 | Final Advocacy and Communication Plan/Strategy | Final Advocacy and Communication Plan/Strategy incorporating feedback from consultations, round tables, and project stakeholders, including a roadmap for implementation | 2 day | Dec |
| | **Total** | **4 deliverables completed and submitted** | **8 days** | |

## 6. Requirements of the Experts Team

### a. Qualification

- University or academic equivalent in the field of Social Sciences, namely Social Work, Sociology, Child Protection, Advocacy and communication
- Relevant qualification in Social Services, Social Reform, Child Protection Services, Process Facilitation.

**b. Competencies**

- Proven knowledge and experience Social Services, especially with reference to Child Protection
- Strong communication skills
- Strong analytical skills
- Strong presentation and listening skills
- Ability to work under tight deadlines with excellent time management skills
- Strong results orientation
- Ability to cooperate and coordinate with project team without compromising quality, team spirit and positive working relations
- Flexible and responsive towards changes.

**c. General experience**

- Minimum of 5 years of experience working in Child Protection, Social Services and Reforms
- Minimum of 5 years of experience of individual and group consultation

7. **Necessary Documents to be submitted**

**The Technical** and **Financial** offer should be composed of:

- Curriculum Vitae
- Financial proposal

8. **Evaluation Criteria**

The selection will be based on the following criteria:

- Relevant experience and qualifications (40%)
- Financial proposal (30%)
- References and previous work experience (30%)

9. **Institutional arrangements**

The expert will be under direct supervision of CPN relevant project manager.

**Կարճաժամկետ փորձագիտական ծառայությունների հանձնարարական**

## 1. Հանձնարարականի ամփոփում

| | |
|---|---|
| **Ծրագիր** | «Հզոր քաղաքացիական հասարակություն՝ հանուն երեխաների հզորացված պաշտպանության» |
| **Ծրագրի տևողություն** | 01.12.2024-30.11.2027 |
| **Նպատակ** | Մշակել և իրականացնել շահերի պաշտպանության և հաղորդակցության մանրամասն ծրագիր/ռազմավարություն, որը կօգնի ակտիվորեն ներգրավել և մոբիլիզացնել Երեխաների պաշտպանության ցանցի անդամ կազմակերպություններին՝ ապահովելու նրանց արդյունավետ և ազդեցիկ մասնակցությունը 2025–2029 թվականների երեխաների իրավունքների պաշտպանության համալիր ծրագրի վերջնականացման և իրականացման գործընթացներում: |
| **Ծառայության մեկնարկի և ավարտի ամսաթիվը** | 18.06.2026-20.12.2026 |
| **Հաշվետվություն և կից հավելվածներ** | 25.12.2026 |

## 2. Ներածություն

Հայաստանում ընթացիկ սոցիալական, տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացումները շարունակում են զգալի մարտահրավերներ ստեղծել երեխաների պաշտպանության (ԵՊ) համակարգի համար: Չնայած վերջին տարիներին նախաձեռնվել են կարևոր բարեփոխումներ, երեխաների պաշտպանության համակարգում դեռևս առկա են բացեր՝ կարգավորող իրավական դաշտում, ծառայությունների ստանդարտներում և որակի ապահովման մեխանիզմներում: Այս բացերի հաղթահարման և կայուն համակարգային բարեփոխումների ապահովման համար կարևոր է քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից համակարգված և ապացույցների վրա հիմնված ադվոկացիայի ամրապնդումը:

«Ավելի հզոր քաղաքացիական հասարակություն՝ հանուն երեխաների հզորացված պաշտպանության» ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր) նպատակ ունի ուժեղացնելու քաղաքացիական հասարակության դերակատարների կարողությունները՝ Հայաստանում երեխաների պաշտպանության ոլորտում քաղաքականությունների մշակման և ադվոկացիոն գործընթացներին արդյունավետ մասնակցելու համար:

Ծրագիրն իրականացվում է «Վորլդ Վիժն Հայաստան» Երեխաների պաշտպանության հիմնադրամի (ՎՎՀ), «Երեխաների պաշտպանության ցանց» հասարակական կազմակերպության (ԵՊՑ), «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության (ԱԶԿ), Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի հասարակական կազմակերպության (ՀՍԱԱ) և «Տահույս» հասարակական-կրթական կազմակերպության կողմից:

Հատուկ նպատակ 1-ի (SO1)՝ «Երեխաների պաշտպանության ոլորտի դերակատարների կարողությունների զարգացում՝ Հայաստանում երեխաների պաշտպանության կարգավորող դաշտի բարելավմանն ուղղված քաղաքականությունների մշակման և ապացույցների վրա հիմնված շահերի պաշտպանության գործընթացներում ակտիվ ներգրավվածության համար» շրջանակում Երեխաների պաշտպանության ցանցը կհամակարգի առաջնահերթ թեմատիկ ուղղություններով համատեղ քաղաքականության առաջարկությունների և դիրքորոշման փաստաթղթերի մշակման կառուցակարգված գործընթաց: Այդ ուղղությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում, երեխաների պաշտպանության նվազագույն չափանիշներով, ծառայությունների որակով և անդամ կազմակերպությունների կողմից վերհանված այլ համակարգային խնդիրներով:

Ապահովելու համար կառուցակարգված, մասնակցային և ապացուցահեն գործընթաց՝ ԵՊՑ-ն կկազմակերպի աշխատանքային հանդիպում անդամ կազմակերպությունների հետ, որին կհաջորդի կոնկրետ քաղաքականության փաստաթղթերի մշակումը՝ 2026 թվականի շահերի պաշտպանության գործունեությունն ուղղորդելու նպատակով:

Այս նպատակով ԵՊՑ-ն նախատեսում է ներգրավել Խորհրդատուի, որը կաջակցի գործընթացից բխող քաղաքականության առաջարկությունների և/կամ դիրքորոշման փաստաթղթերի վերլուծական շրջանակի մշակման, նախագծման և վերջնականացման աշխատանքներին:

## 3. Առաջադրանքի նպատակը (աշխատանքի շրջանակը)

Խորհրդատուն կմշակի շահերի պաշտպանության և հաղորդակցության մանրամասն ծրագիր/ռազմավարություն՝ ուժեղացնելու համար ԵՊՑ կողմից իրականացվող ծրագրի շահերի պաշտպանության ջանքերը և ապահովելու ԵՊՑ անդամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) ակտիվ մոբիլիզացումն ու առավել ազդեցիկ ներգրավվածությունը 2025–2029 թթ. Երեխաների իրավունքների պաշտպանության համալիր ծրագրի իրականացման գործընթացներում:

**Առաջադրանքը ներառելու է հետևյալ գործողությունները.**

• 2026 թվականի հունիսի վերջին մշակել Շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության նախագիծ (այսուհետև՝ Նախագիծ), որը կներառի շահերի պաշտպանության նպատակները, հիմնական ուղերձները, շահակիցների քարտեզագրումը, հաղորդակցության ուղիները, ներգրավման մեխանիզմները և ԵՊՑ անդամ կազմակերպությունների մոբիլիզացման մոտեցումները:

• Կազմակերպել և վարել երեք կլոր սեղան-քննարկում ԵՊՑ անդամների և համապատասխան շահակիցների մասնակցությամբ՝ կարծիքներ հավաքագրելու և համատեղ ներգրավվածությունն ուժեղացնելու նպատակով.

- **Կլոր սեղան 1- հունիս, 2026**
- **Կլոր սեղան 2-սեպտեմբեր, 2026**
- **Կլոր սեղան 3- նոյեմբեր, 2026**

• Առաջադրանքի ողջ ընթացքում ապահովել կանոնավոր համակարգում և հաղորդակցություն ԵՊՑ աշխատակազմի հետ՝ ծրագրի զարգացումներին, շահերի պաշտպանության առաջնահերթություններին և շահակիցների հետադարձ կապին համապատասխանեցումն ապահովելու նպատակով:
• Կլոր սեղան-քննարկումների, ստացված առաջարկությունների և շարունակական խորհրդակցությունների արդյունքների հիման վրա վերանայել և կատարելագործել շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության նախագիծը:
• Մինչև 2026 թվականի դեկտեմբեր ներկայացնել շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության վերջնական տարբերակը՝ ներառելով առաջարկությունները և համաձայնեցված գործողությունները, որոնք կաջակցեն ԵՊՑ շահերի պաշտպանության գործունեությանը՝ կապված 2025–2029 թթ. ԵԻՊ համալիր ծրագրի հետ:

**Տևողություն և ժամանակացույց**

- **Դիմումների ընդունում**-մինչև 2026 թվականի հունիսի 12
- **Նախապատրաստական փուլ**-մինչև 2026 թվականի հունիսի 23
- **Կլոր սեղան-քննարկումների անցկացում**-2026 թվականի հունիս, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին
- **Վերջնական փաստաթղթի ներկայացում**-վերջին կլոր սեղան-քննարկումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում

✓ **Աշխատանքի ընդհանուր ծավալը** գնահատվում է 8 աշխատանքային օր:

**4. Հիմնական առաջադրանքներ և գործունեություն**

**1. Մեկնարկային փուլ և փաստաթղթերի ուսումնասիրություն**

- Ուսումնասիրել ծրագրին առնչվող հիմնական փաստաթղթերը, ներառյալ՝ 2025–2029 թվականների Համալիր ծրագիրը, ծրագրային առաջարկը, շահերի պաշտպանության և հաղորդակցության առկա նյութերը, ինչպես նաև ոլորտին առնչվող քաղաքականության և ռազմավարական փաստաթղթերը:
- Անցկացնել մեկնարկային հանդիպում ԵՊՑ աշխատակազմի հետ՝ հստակեցնելու ակնկալիքները, առաջնահերթությունները, ժամանակացույցը և հիմնական շահակիցներին:
- Բացահայտել Համալիր ծրագրի հետ կապված շահերի պաշտպանության հիմնական հնարավորությունները, մարտահրավերները և ներգրավման կարիքները:

**2. Շահակիցների քարտեզագրում և վերլուծություն**

- Իրականացնել շահակիցների քարտեզագրում՝ առանձնացնելով պետական կառույցները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, զարգացման գործընկերներին, լրատվամիջոցների ներկայացուցիչներին, մասնավոր հատվածի դերակատարներին և այլ համապատասխան շահակիցներին:
- Վերլուծել շահակիցների հետաքրքրությունները, ազդեցությունը, ներգրավման ներուժը և հաղորդակցական կարիքները:
- Բացահայտել ԵՊՑ անդամ կազմակերպությունների մասնակցությունն ու մոբիլիզացիան ուժեղացնելու հնարավորությունները:

**3. Շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության նախագծի մշակում**

- Սահմանել շահերի պաշտպանության նպատակները, ակնկալվող արդյունքները և առաջնահերթ թեմատիկ ուղղությունները:
- Մշակել հիմնական շահերի պաշտպանության և հաղորդակցության ուղերձներ՝ հարմարեցված տարբեր թիրախային լսարանների համար:
- Առաջարկել հաղորդակցության ուղիներ, գործիքներ և տեղեկատվության տարածման մեխանիզմներ:
- Նախագծել ԵՊՑ անդամ կազմակերպությունների ներգրավման և մոբիլիզացման մեխանիզմներ:
- Մշակել իրականացման շրջանակ՝ ներառելով նախնական գործողություններ, պատասխանատվությունների բաշխում և մոնիթորինգի հիմնական մոտեցումներ:
- Մինչև 2026 թվականի հունիս ներկայացնել Նախագիծը:
- Հաղորդակցական նպատակներով առաջարկել հիմնական ուղերձների օրինակներ:

**4. Կլոր սեղան-քննարկումների կազմակերպում և վարում**

- Պատրաստել օրակարգեր, քննարկման ուղեցույցներ և վարման համար անհրաժեշտ նյութեր կլոր սեղան-քննարկումների համար:
- Վարել հետևյալ քննարկումները.
  - ✓ **Կլոր սեղան 1 (հունիս, 2026)**-նախնական արդյունքների ներկայացում, ռազմավարության նախագծի քննարկում և առաջարկությունների հավաքագրում:
  - ✓ **Կլոր սեղան 2 (սեպտեմբեր, 2026)**-արձանագրված առաջընթացի, ձևավորվող շահերի պաշտպանության առաջնահերթությունների և շահակիցների ներգրավման մոտեցումների քննարկում:
  - ✓ **Կլոր սեղան 3 (նոյեմբեր, 2026)**-վերջնական առաջարկությունների քննարկում և առաջնահերթ գործողությունների համաձայնեցում:
- Յուրաքանչյուր քննարկումից հետո փաստագրել հիմնական արդյունքները, առաջարկությունները և համաձայնեցված գործողությունները:

**5. Շարունակական խորհրդատվություն և համակարգում**

- Առաջադրանքի ամբողջ ընթացքում ապահովել կանոնավոր հաղորդակցություն ԵՊՑ աշխատակազմի հետ:
- Հաշվի առնել ԵՊՑ անդամների, շահակիցների և ծրագրի գործընկերների առաջարկություններն ու դիտարկումները:
- Անհրաժեշտության դեպքում վերանայել և կատարելագործել շահերի պաշտպանության առաջնահերթությունները, հիմնական ուղերձները և ներգրավման մոտեցումները:

**6. Շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության վերջնականացում**

- Վերանայել ռազմավարության նախագիծը՝ հիմնվելով կլոր սեղան-քննարկումների, խորհրդակցությունների և շահակիցների հետադարձ կապի վրա:
- Մշակել շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության վերջնական տարբերակը, որը կներառի՝
  - շահերի պաշտպանության նպատակներն ու առաջնահերթությունները,

- շահակիցների քարտեզագրման և ներգրավման շրջանակը,
- հիմնական ուղերձներն ու հաղորդակցական մոտեցումները,
- հաղորդակցության ուղիներն ու տարածման գործիքները,
- անդամ կազմակերպությունների մոբիլիզացման և մասնակցության մեխանիզմները,
- առաջարկվող շահերի պաշտպանության գործողությունները և իրականացման ճանապարհային քարտեզը:

- Վերջնական կլոր սեղան-քննարկումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության վերջնական տարբերակը:

**Ակնկալվող արդյունքներ**

1. Շահակիցների քարտեզագրում և վերլուծություն (ռազմավարության մշակման գործընթացի շրջանակում):
2. Շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության նախագծի մշակում (հունիս, 2026):
3. Երեք կլոր սեղան-քննարկումների կազմակերպում և արդյունքների համառոտ ամփոփագրերի պատրաստում:
4. Շահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության վերջնական տարբերակի կազմում (դեկտեմբեր, 2026):

## 5. Ակնկալվող արդյունքներ, ժամանակացույց և հաշվետվություններ

| | **Առաջադրանքներ** | **Հանձնվող աշխատանքը** | **Աշխատանքային օրերը** | **Ժամանակացույց** |
|---|---|---|---|---|
| 1 | Շահակիցների քարտեզագրում և վերլուծություն | Շահակիցների քարտեզագրման և վերլուծության հաշվետվություն, որը կներկայացնի 2025-2029 թթ. ԵԻՊ համալիր ծրագրի հետ առնչվող հիմնական դերակատարներին, նրանց դերերն ու պատասխանատվությունները, ազդեցության մակարդակը, հետաքրքրություններն ու ներգրավման հնարավորությունները: | 1 օր | Հունիս |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Ճաների պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության նախագիծ (նախնական, սևագիր տարբերակ) | Ճաների պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության նախագիծ, որը կներառի շաների պաշտպանության նպատակները, հիմնական ուղերձները, շահակիցների ներգրավման շրջանակը, հաղորդակցության ուղիներն ու գործիքները, ինչպես նաև անդամ կազմակերպությունների մոբիլիզացման և մասնակցության մեխանիզմները: | 2 օր | Հունիս |
| 3 | Երեք կլոր սեղան-քննարկումների կազմակերպում և վարում | Երեք կլոր սեղան-քննարկումների կազմակերպում և վարում, ներառյալ օրակարգերի և քննարկումների վարման նյութերի պատրաստումը, մասնակիցների ակտիվ ներգրավման ապահովումը, ինչպես նաև յուրաքանչյուր հանդիպման արդյունքների վերաբերյալ համառոտ հաշվետվությունների պատրաստումը՝ հիմնական արձանագրումների, առաջարկությունների և համաձայնեցված գործողությունների ներկայացմամբ: | 3 օր | Հունիս Սեպտեմբեր Նոյեմբեր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Ծահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության վերջնական տարբերակ | Ծահերի պաշտպանության և հաղորդակցության ծրագրի/ռազմավարության վերջնական տարբերակ, որը ներառում է խորհրդակցությունների, կլոր սեղան-քննարկումների և ծրագրի շահակիցների կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները, ինչպես նաև ռազմավարության իրականացման ճանապարհային քարտեզը: | 2 օր | Դեկտեմբեր |
| | **Ընդամենը** | Բոլոր 4 ակնկալվող արդյունքների մշակում, ամփոփում և ներկայացում սահմանված ժամկետում: | **8 օր** | |

## 6. Փորձագետի նկատմամբ պահանջները

**ա. Որակավորում**

- Համալսարան կամ ակադեմիական համարժեք կրթություն սոցիալական գիտությունների ոլորտում, մասնավորապես՝ սոցիալական աշխատանք, սոցիոլոգիա, երեխաների պաշտպանություն:
- Համապատասխան որակավորում սոցիալական ծառայությունների, սոցիալական բարեփոխումների, ԵՊ ծառայությունների և գործընթացների վարման ոլորտում:

**բ. Հմտություններ**

- Գիտելիքներ և փորձ սոցիալական ծառայության ոլորտում, հատկապես ԵՊ ծառայությունների ոլորտում:
- Հաղորդակցման լավ հմտություններ:
- Վերլուծական հմտություններ:
- Ներկայացման և լսելու հմտություններ:
- Սեղմ ժամկետում աշխատելու ունակություն՝ ժամանակի կառավարման գերազանց հմտություններով:
- Արդյունքահեն մոտեցում աշխատանքի նկատմամբ:
- Թիմի այլ փորձագետների հետ համագործակցելու և համակարգելու կարողություն՝ պահպանելով աշխատանքի բարձր որակը, թիմային ոգին և դրական աշխատանքային հարաբերությունները:
- Փոփոխությունների հանդեպ ճկունություն:

**գ. Ընդհանուր փորձ**

- Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ ԵՊ, սոցիալ ծառայությունների և բարեփոխումների ոլորտում:
- Առնվազն 5 տարվա անհատական և խմբային խորհրդատվության փորձ:

**7. Ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթեր**

Տեխնիկական և ֆինանսական առաջարկը պետք է ներառի.

– ինքնակենսագրություն,
– մոտիվացիոն նամակ՝ նախորդ փորձի մասին ցուցումով,
– մեթոդաբանություն և առաջարկվող գործողություն (ոչ ավելի, քան 2 էջ),
– ֆինանսական առաջարկ:

**8. Գնահատման չափանիշներ**

Ընտրությունը հիմնված կլինի հետևյալ չափանիշների վրա.

– Համապատասխան փորձ և որակավորում (40%):
– Առաջարկվող մոտեցման և մեթոդաբանության որակ (30%):
– Ֆինանսական առաջարկ (20%):
– Հղումներ և նախորդ աշխատանքային փորձ (10%):

**9. Կազմակերպչական կարգաբերումներ**

Խորհրդատուն հաշվետու կլինի Երեխաների պաշտպանության ցանցի համապատասխան ծրագրի ղեկավարին և կգործի նրա համակարգման ներքո: